

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ  
Նմբագրութիւն «Փիիւնիկ» Ի  
Աղեկանդրիս



S. Barat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
Լր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25  
—  
ԲԱԺՆԵԳԻՆ  
ԿԱՆԵԼԿԷ  
Զեռագիրէս չ'պար-  
ծուիլ

# Փիիւնիկ

ԱՐՏԱՍԱՏՄԱՆ  
Ֆր. 15  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8  
ԿՈՎԿԱՍ  
ՅԼԵԿԱՆ Բպլ. 6  
Ազգեր կ'ընդուն-  
ուին մասնաւոր  
պայմաններով

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԵՐՆԳՇԱԲԵԹԻ, ԿԵՐԱԿԻ առաւօտները

### ՊԱՆԴԱՆՆԵՐԷՆ

Պաշտօններուն հրդեհը պիտի չը մարի. յեզոփոխները կը շարունակեն կէտ առ կէտ գործադրել ծրագիրներն, որ արդէն դժուար էր ասորիէ մ'ի վեր. ա՛լ կասկած չի կայ, ապառաժութիւնը պայթած է, թէ և ս'չընդհանար, ինչպէս որ կը գտնակաւ գարնան ըսկիզբները: Բարբ ցործողութիւնները սերտուած, մշակուած ու ձեւումն նըպատակի մ'իրագործւած փոթոցներու բնութիւնն ունին իրաւ, լակ փոքրիկ կռիւներով ու ընդհարումներով անցան Ապրիլ, Մայիս ամիսները, բայց արիւնը կը հոսի միշտ, ամեն կողմէ, Մակեդոնի յ մեծ ու փոքր քաղաքներուն մէջ: Պատերազմը, առանց պաշտօնապէս յայտարարուած ըլլալու, թուրքիոյ ու Պալեստինայ միջև, սկսած է: Ահա՛ Բանիճայի կռիւը:

Բանիճանի մէջէն 3 ժամ հեռուոր գիւղ մըն է, որ մակեդոնական դոմիթէյն զինուորները կատաղի կռիւ մը բրին թուրք զօրքերու դէմ: Կռիւ, որ

24 ժամ տեւց, անընդհատ. ապրտամբները, միայն 50 հոգի, դիպագնական զինադրութիւն մըրած են, անհաւասար կռիւը մղած ու ի վերջոյ ջարդուած են թուրք զօրքերէն:

Ապառաժներուն կեզրոնը կը կարծախ մեթոսի վանքը, սահմանազլիին վրայ. հոն կը հաւաքուին. հոն կը խորհրդակցին, հոն կը զինուին առնոք ու անկից կը մեկնին կռիւներուն վայրերը:

Թուրք զօրապետներուն անզեկազրները կը սնդեն թէ՛ ապառաժներուն մէջ Պալեստինայի սպաներ կան մեծկակ թուով և թէ՛ ապառաժները տինամիթէն գտա, սրի՛ սրի՛ զընդակներ ալ կը գործածեն:

Վերջին կռիւներուն մէջ, թուրք նիզամները մեծ կորուստներ ունեցած են եղբր այդ սըլմալմներով, որոնք ահ ու սարսափ կը սփռեն զօրագուններուն մէջ. յաճախ, թուրք զօրքերը տինամիթէններուն ու արմալմներուն ստակումէն բռնուած, կարգերնին կը թողուն կը փախչին:

Յեղափոխներուն ձեռքը շատ  
երկայն է. Աւարո - Հանգստիոյ մաս-  
նաւոր գործարաններուն մէջ պատ-  
րաստուած տինամիթներ ու տըմտըմ-  
ներ, ժամանակին բերուած ու մըր-  
ցուած են ՚ի Պուլկարիա, ուր գաղանի  
տեղեր պահուած են, մինչև խակէս-  
ներու քարայրներու մէջ: Այս պայ-  
թուցիկներն ու մահացան նիւթերը  
շատ դիւրութեամբ, առանց արգելքի  
փոխադրուած են Մակեդոնիա, Պուլ-  
կարիայէն ու նոյն խակ Յունաստանի  
սահմանագրութիւններէն:

Յեղափոխներուն այսքան լուրջ  
պատրաստութիւնները, գեռ տեղ  
արիւնահեղ կոփները, հանդիպումնե-  
րուն ու ընդհանրումներուն մէջ Պուլ-  
կար սպաններուն գոյութիւնը. այս  
ամենը մղած է թուրքիան իր ուժե-  
րը կեդրոնացընելու հոն, Մակեդոնիա:  
Պուլկարիան գեռ չուղեր ինքզինք  
ճանչնալ պատասխանատու, ազգու-  
օրէն կը բողոքէ Դրան պնդումնե-  
րուն դէմ: Ֆէրալնանս իշխանը շատ  
լաւ գիտէ կացութեան ծանրութիւնը.  
գիտէ նաև թէ՛ պատերազմը պիտի  
պայթի վերջապէս ու մակեդոնական  
հարցը պիտի լուծուի ոչ թէ Աւարո-  
ուսական համբուստ քարէն-դը-  
ղումներովը — սրտեք մինչև հիմայ  
գործադրուած չեն — այլ պատե-  
րազմով, Պուլկարո - թուրք պատե-  
րազմով մը:

Ախտանիշները սպառնալից են.  
գահլիճ մը կ'իյնայ, արիչ մը կը  
կանգնի. ասիկայ խաղաղութիւն չը  
նշանակէր:

Այս օրերս, Տեյլի նիւզի թղթա-  
կիցը առասկայութիւն մ'ունեցաւ  
Տանէֆի, Պուլկարիոյ նախկին նա-  
խարարապետին հետ: Այս վերջինը  
յայտարարեց թէ՛ պատերազմը պի-

տի ըլլայ, անխուսափելի ու ճակա-  
տագրական է այն. բարենորոգում-  
ները չը գործադրուեցան ու պիտի  
չը գործադրուին հիւժի բաշային  
ձեռքով:

Եթէ ատեն մ'ալ շարունակէ  
իրերու այս վիճակը, բոլոր խաղա-  
ղափրակուն միջոցներն ու բոլոր բա-  
րեկամական դիտումները պիտի չը  
կրնան արգիլել պայթումը, մի՛ժ պայ-  
թումը: Եւրոպան պիտի ստիպուի  
միջամտել, սրովհետև առանց իր  
միջամտութեան, հրդեհը կարելի չէ՛  
մարել: Բարենորոգումները, արգէն  
անբաւական, նախագուռը պիտի բա-  
նան գուշակուած ու վախցուած ընդ-  
հանուր խառնակութեանց: Կացու-  
թեան միակ զարմանը, Տանէֆի կար-  
ծիքով — որ իր անձնական կարծիքը  
չէ միայն —, եւրոպական միջամը-  
սութիւնն է, ազգու, անկեղծ ու  
անվերապահ միջամտութիւնը, գոր-  
ծադրելու համար Պերլինի Դաշնա-  
գիրը ստորագրող տերութեանց ձեռքով:

Մակեդոնական հարցը լուծել  
պէտք է, հո՛ս է խնդիրը:

Լուծումը մէկ բանով միայն  
կրնայ ըլլալ, յայտարարած է Տանէֆի:

Պիտելով Մակեդոնիան ինքնա-  
վարութեամբ, տալով անոր անկախ,  
եւրոպացի կառավարիչ մը, ու, եւ-  
րոպական հսկողութեան տակ, գոր-  
ծադրելով Պերլինի գաշնագիրը:

Ո՞վ է լսողը:

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ԹԱՆԵԱՒ ՇԱՅԵՐԸ**

Եթէ թերթի մը խորագրութեան երանկի  
խոսներէն ու կոտներէն չես՝ բայց թէ,  
այս գրկանքին իբր փոխարինում, լրագրա-  
սը ծնած ես ու քիչ մ'ալ եթէ կողես՝  
ամաքէօր զրոյ՝ նախանձախոյր ըլլալով

մեր եզրատահայ մտաւորն զարգացման և յառաջգիտութեան, անոր լայնածաւալ ԼՂերուն մէջ անմիջապէս պիտի նշմարես մեծ պակաս մ'որ աչքի պիտի զարնէ. գաւառային թղթակցութիւններ պիտի ըսէր Տ. Արփիարեան, մասնաւորելով մեր խօսքը Եզրատասի համար:

Այն ախար օրէն արդարև որ Կարապետ Սիւսեան, Արփիթէն, պարբերացած է իր արձակ-բանաստեղծականներու շարքը, որուն մէջ անդատաւոր պիտի գտնէր նորահասի մը երեմիական սրտառու զպաշակը, շինք կրնար ըսել թէ ցաւալի ամալութիւն մը կայ մեր մատուրն ԼՂերուն մէջ, շատ անգամ պարայ՝ պահանջկոտ ընթերցողներուն համար:

Այս պակասը շատ աւելի ցաւալի կը դառնայ մեր բով, երբ փորձով կը տեսնենք որ՝ այսօր, քիչ մը ամեն կողմ, ամեն գիւղի անկիւն: Վերին թէ Ստորին Եզրատաս, Ստատանի մէջ ալ նոյն իսկ, ունինք հայերու ցանցաութիւ մը, որուն մէջ բարեբաղդաբար չեն պակսիր ընթերցողներ, մեր թերթիւն լատպոյն բաժանորդները չըսելու համար:

Գաւառային թղթակցութիւններու պակասին մէջ միթարական ու շինիչ բացառութիւն մը կը կազմեն, որոնք ենք ըսել, Հապէշիտասնի մեր իւրզն հեռաբնակ եզրայրները, որոնցմէ յաճախ մեզի եկած ազգու արձագանդները թէպէտ հառաչանքներ պիտի խլեն մենէ՝ ինչպէս մայրաքաղաքին մէջ նոյնպէս և հեռուներն ալ տեսնելով հայուն տոհմային նկարագրին ամենավատ կողմերէն մին, եզրայրսիրութեան պակասը, որուն, փա՛ռք Ստատուայ, ամենէն ընդլիցնող օրինակը մեզի պիտի տան սա մեր յեղափոխական կոչուած անտանկիօրէն կոտակցամուլ հերոսները:

Ինչո՞ւ թղթակցութիւններու այս ամօթալի պակասը՝ վերի թէ վարի Եզրատասին ու Ստատանին համար. ինչո՞ւ երբե՛ն չի կարգանք թէ ի՛նչ կանցի կը դառնայ կոր գիւղաքաղաքներու կամ գիւղերու մէկ անկիւնը, ազգային տեսակէտով գտնէ, օրինակի

համար, թէ Գեորգ Թաւուզեան մը Մանստրայի մէջ կը մահմեականանայ կոր՝ վրէժը առնելու համար միշտ բամբաստած խեղճ Տէր Մամբրէէ մը և կամ ֆէլլահաճի մը սիրահարած բլլալուն համար:

Գրելու նիւթը, իրա՛ւ ազգային, տեսակէտով, շատ անգամ պիտի պակսի գիւղերուն մէջ, բայց շատ անգամ նիւթը չէ որ պիտի պակսի զգալուն ու ինքզինքը արտայայտելու ընդունակ գրողի մը բով, երբ մարդ կրնայ գտն մը հանել մինչև իսկ համազգային անցողարձերէն ու վաճառականական գործառնութիւններէն, խրախուսելով իր ընթերցող ազգայինները որ իրենք ալ յանգուսն բլլան Յոյներուն ու Հրեաներուն պէս, մէկի թողուն ծայրայեղօրէն տափալ ու փաստակար ինքնամիտութիւնը՝ իրենց արքէֆ/սլաւոսիօններու կեդրոնավայր ունենալով Գահիրէն կամ Ալեքսանդրիան: Գեղջկական կեանքը ինքնին շատ տխուր է քանի մ'ամիս անցնելէ վերջ, և այդ կեանքը՝ զգայուն մարդուն բով՝ հետզհետէ անտանկի պիտի դառնայ, որովհետև գիւղերու մէջ չունինք հայերու այն թիւը՝ զոր պէտք էր որ ունենայինք ի նկատ ունենալով հայուն բնածին ընդունակութիւնը ամեն բանի մէջ: Մայրաքաղաքին հեշտալի կեանքէն չի հեռանալու, մեզի կոտակուած պապկնական ճամբէն չի շեղելու ու մեր գործառնութիւնը իր սահմանափակ վիճակին մէջ պահելու յիմար հալամիտութիւնն է միայն որ պատճառ եղած է մեր ստորագաս մնալուն, օտարներուն բաղգասամար: Օրինակ առնենք Յոյներէն, սիրելի ընթերցող, և, եթէ պատահի որ օրին մէկը վերի կամ վարի Եզրատաս ճամբորդելու հարկին մէջ գլխաւոր, բաց ըրէ՛ աչերդ, ու կանդ առ ամեն կայարան. վատն եզիր որ անդատաւոր այդ կայարանի պիւճեճին Յոյն մ'է. թէ այդ գիւղին վաճառականութեան գիտաւոր ու շահաբեր ճիւղերը մեծ մասամբ Յոյներուն ձեռքին մէջ են: Գեո սասը տարի առաջ այդ պիւճեճին կամ պազալը, ինչպէս որ

կ'ուզէք, սա մեր ճանչցած Նիքոլան էր, Յունաստանէն կամ Կիպրոսէն նորեկ, վրան պուր աճնորհք, անօթի՝ սոխալուի գայլի մը նման: Տառը տարինիւր անցած են, շատ մը գործերու ձեռնամուխ եղած է այդ երկար ժամանակամիջոցին մէջ, շատ անգամ կորսնցուցած է, սնանկացած ալ. բայց միշտ Յորի մը համբերութիւնը ունեցած է. վազուան յաջողութեան վրայ լիախառն, և կամ իր սնանկացած օրերուն մէջ իսկ, պըտնուած է Յոյն մը, Աթմանասօրուլօն, որ օգնութեան հասած է իրեն առանց վախնալու: Օ՛հ, հիմա փոխուած է այդ Նիքոլան, զրամ շինած է մարդը, զրամ, Նիքոլախիս եղած է իր տոհմին յանգճութեանը շնորհիւ, տարին մէկ անգամ օգտախոթութեան կերթայ ու կրկին կը վերադառնայ գիւղին իր մէկ անկիւնը՝ որ ա՛լ մնալու պէտք չունի, բայց թէ զեռ անսպառ հանք կայ հոն, իրեն համար:

Հայն է միայն որ մայրաքաղաքին մէջ ապրիլ պիտի սիրէ և կամ պիւզերուն մէջ՝ առօջին հանդիպող հայը անսպառ ծխափամառ ըլլալու է:

Ս. Օ.

(Շարունակելի)

### ԱԶԳԱՅԻՆ

#### ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՕԾՈՒՄԸ

Տ. Տ. ՍԱՀԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԽԱՊԱԵԱՆ

Ամսոյս Յին Աշխարհամարան կիրակին, Սոյ Մայր Տաճարին մէջ կաթողիկոսական օծումն ընդունած է Գեր. Տ. Մովսէս եպիսկոպոս Կէօմրիքճեանէ, մասնակցութեամբ Աթոռին Լուսարարացեալ Գեր. Տ. Կիրակոս եպիսկոպոս Պէքմէյճեանի, Ֆրնուլի Գեր. Տ. Նիկողոս եպիսկոպոս Խոռխոռունիի և Զեթունի Առաջնորդ-վանահայր Գեր. Տ. Կարպետ եպիսկոպոս Քէլէկեանի: Օծման շքեղ արարողութեան ներկայ էին Կիլիկիոյ թեմերէն իրան հաւատացեալներու բազմութիւն մը:

—Տ. Գոպրիել Ծ. Վ. Անդրէասի ձեռնը. Երեսուցեմի Ս. Յակովբեանց Աթոռին նոր լուսարարացեալ, Գեր. Տ. Գարրիէլ Ծ. Վ. Անդրէասն, տաժանիկի հիւանդութեան մը հետեանքով անցած շարժումն մէջ վախճանած է:

—Տ. Ղեւոնդ Զլարդայեան Մագնոսեան. Վերջերս Պոլսական թերթիւն մէջ, Երեսուցեմի Ս. Յակովբեանց Միաբանութեան մէջ տեղի ունեցած սխալ գէղարկուն արիթմովը, շատ մը հակասական տեղեկութիւններ հրատարակուեցան:


Տեղիս շարաթաթերթերէն Պատ. «Ազատ Ռեմ»-ը բառական զրոգեցաւ արդէն այդ աղտոտ միջադէպերով, արձագանք ըլլալով պոլսական թերթերուն և աւելի, հիմունքով տեղեկութեանց վրայ, Երեսուցեմէն վերադարձող օխտաւորներու բերնէն բազում ընդհանրացաւ:

Մենք ն գտաակ չ'ունինք առ այժմ. քնննապատիւ մինչև ցարդ հրատարակուած թեր ու զէմ կարծիքները: Միայն պարտք կը զգանք հանրութեան ուշադրութիւնը հրատարակել սա բացարձակ իրողութեան վրայ թէ Գեր. Տ. Ղեւոնդ վարդապետ Մագնոսեան Ս. Յակովբեանց Միաբանութեան մէջ մէկ հատիկ անհրամշտ մարդն է. վանքին հսկին է, որ բարկներով զիսցած է, իր կէմտագիտական խորունկ հմտութեամբը, իր փորձառութեամբն ու մէկէ աւելի կարողութիւններովը, հաւատարակչութեան մէջ զնել Ս. Աթոռին այնքան անգամներ խախտուած պիւտնէն: Ինք, Հայր Մագնոսեանն և որ յաջողեցաւ Ս. Աթոռին եկամտներն աւելցընել նորանոր հասութարեր շինութիւններով և ուրիշ ազբիւրներով:

Դալով տարիներէ ի վեր համար տուած ըլլալուն կամ չ'ըլլալուն, պէտք է նախապէս գիտնալ թէ 1880էն ի վեր, Պաարիարքական քննիչ պարտցեալ Ստեփան բաշա Ասլանեանի կարգադրութեամբ, Ս. Յակովբայ վանքին բոլոր հաշտական գործառնութեանց տեղեկագիրն ա հաշտեկիւր տարուէ տարի

կը զրկուի Պոլտոյ Ազգ. Պատրիարքարանը,  
Ս. Աթոսին Պատկ. Տնօրէն Ժողովին  
կողմէն:

Աս այժմ այսքան, ապագային պիտի վե-  
րադանանք նոյն հարցին:



**ԶԷՅՓՈՒՆԻ ԱՆՑԵՆԼԷՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԷՆ**

Հ Ա Տ Ո Ր Բ

Վերջապէս լոյս տեսաւ մեր համակրելի  
հայրենակից Պ. Զեթունցիին երկասիրութեան  
Բ. Հատորը, որ կը պարունակէ վերջին  
անցքերուն մանրամասն պատմութիւնը:  
Գրքին սկիզբը զրուած է պատկերը Ֆրո-  
նտպի առիւծ Գեր. Հ. Բարթոլոմէոս վրդպ.  
Թաղաճեանի, սպառապէն, զիւցազնօրէն  
նստած իր ճանճկէն ձերմակ երիվարին վրայ  
նոր Ս. Սարգիս մը:

Քերիչ պատկեր մը, նոյն հերոս վարդա-  
պետին. Զեթունի զօրանոցին Գրան առջև,  
վեզարը գլխին, խաչը կո՛րծքին, թորը  
ձեռքին, կեցած է. կը պակտի միայն տո-  
ղանցութիւնը թո՛րք անձնատօր զօրքերուն,  
սպանիւրսն ու իրենց հարէմին, սրանք կար-  
գաւ անցան, մեր բաջարի վարդապետին  
թորին տակէն, մէկիկ մէկիկ համբուրելով  
խաչը, Զեթունի ազատարար խաչը:

Այս երկու պատկերներէն զատ կայ նաև  
ուրիշ պատկեր մը. Զեթունի չորս իշխան-  
ներուն կրտսերագոյնն ու պէտք է ըսել, ա-  
րևազոյնը, Հաղար իշխան Վահանեան,  
(Շօրվայեան) որ Աղիզ բաշայի Մեծ Պա-  
տերազմին հերոսն եղած է:

Համակրելի հեղինակը, ընթերցասէր հա-  
տարակալութեան աւելի զի բամառչելի ընկաւ  
համար իր երկասիրութեան, միայն 10 դրշ.  
ուշ գին պրած է անոր: Երկու հատորները  
միասին քննել փափագողները պէտք է վճարեն  
միայն 20 դրշ. ուշ երկուտական:

Ս. Հատորը կարգացողները շատ բնական  
է որ անհամբեր սպասեն Բ. Հատորին  
երևումին:

« Զէյրուսի սնցեալէն ու ներ-

կալեմը կը վաճառուի փիւնիկի խմբա-  
բառունը, կամ Գեր. Հայր Բարթոլոմէոս  
վարդապետ Թաղաճեանի բով:

Կը յանձնարարենք մեր բոլոր Պատ.  
ընթերցողներուն փութալ քննելու այս թան-  
կազին հատորներէն:



Գահիրէի Գնար Հայկ. Նուագա-  
խումբին հետեւալ կոչը կը հրատա-  
րակենք, յանձնելով զայն մեր զե-  
ղարուեստասէր ազգայիններուն ու-  
շադրութեանը:

Ուրախութեամբ կը նշանակենք թէ՛  
հանգանակութիւնն արդէն սկսած և  
13 ոսկիի զուամարի մը հասած է  
մինչև ցարդ:

Կ Ո Չ

Նուագախումբս իր եօթամտեայ  
գոյութեան ընթացքին մէջ, հակառակ  
բոլոր ջանքերին, չ'կրցաւ ձեռք բերել  
միջոց մը՝ որպիսին լրացունէր խմբին  
ամենակարևոր պակասը — երաժշ-  
տական գործիքները —: Այս առթիւ  
որոշած է առաջիկայ հինգշաբթի 8/21  
Մայիսէն սկսիլ հանգանակութեան,  
օժանդակութեամբ պատ. հոգաբարձ-  
ձութեան տեղւոյս Ազգ. Գալստեան  
վարժարանի, բոլորովին վստահ Գա-  
հիրէի Պատ. Ազգայնոց առատաձեռ-  
նութեան, որը քաջ ըմբռնած ըլլալով  
Գեղարուեստի և առաջընթացութեան ար-  
ժանիքը, պիտի փութայ անչուշաքա-  
չալներէ և այս օգտակար ձեռնարկը,  
չնորհապարտ թողլով մի խումբ երի-  
տասարդներ, սրանք առաջագրած են  
նախանձելի վերջաբանով մը պսակել  
իրենց ստանձնած բուսական դժուարին  
գործը:

ԿՆԻՔ

Գնար Հայկական Նուագախումբ

### ՀԱՅ ՆՈՒԱԳԱԾՈՒՄՑ ԽՈՒՄԱՐ

Ալեքսանդրիոյ մէջ, երկու տարի առաջ կրա-  
կոս ու կամքի տէր երիտասարդներէ կազ-  
մուած Հայ Նուագածուաց Խումբը հետզ-  
հետէ կը յառաջգլմէ: Շարաթ չ'անցնիր  
որ հանրային շքեղ հանդէսի մը չը հրա-  
ւիրուի. և այնքան գնահատուած է օտար-  
ազգիներէն անգամ: Հայ Նուագածուաց Խում-  
բին այս օրըստօրեական զարգացումը կը  
պարտինք մեր համակրելի հայրենակիցներէն  
Տիար Բարսեղ Օհանեանի, որ նոյն Խում-  
բին անձնուէր վարիչն է և որ այդ պաշտօնը  
կը վարէ այնքան ձեռնահասօրէն որքան  
անկեղծօրէն:

Այս անգամ, ամսոյս 24 ին, կիրակի ցե,  
րեկուան ժամը 3 1)2 էն մինչև 7 1)2 Հայ  
Նուագածուաց Խումբը պիտի նուագէ, ինչպէս  
անցեալ կիրակի Խարհիմիէյի միտ քաղինօն:  
Ջրօտակը ազգայիններուն համար այս կի-  
րակի օրուան ժամանցէն աւելի ինչ կայ  
հաճոյական:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՒԼԿԱՐԻՈՒ, 14 մայիս. Այսօրնի  
հասանդէն րևութի ուրիշ 38 վաշտեր կան-  
չուեցան ամբողջացնելու համար զօրաբա-  
նը Մանասթըրի ուր կացութիւնը վրդովուած  
է, հակառակ Դրան ուրացումներուն:

Իփէկի Ալբանիացիները յամառօրէն կը  
մերժեն ամեն բարենորոգում, բայց Սուլ-  
թանը, բացարձակապէս չ'ազդելով արիւնհե-  
ղութիւն, հրաման տուած է շարունակելու  
բանակցութիւնները, ձեռք բերելու համար  
զօրքերուն մուտքը, ինչպէս ելաւ Տիար-  
վայի մէջ:

Երբ որ թուրք զօրագնացիքը Տիարօվա  
մտան, ալբանիացի պետերը միշտիւ Էօմէր  
Րիւշտի բաշային յանձնեցին ուղերձ մը,  
որով իրենց հաւատարմութիւնը կը յայտա-  
բարկին Սուլթանին ու չ'էին ուզեր զէնքով

զիմացրել իր զօրքերուն, բայց կը մերձէին  
ընդունիլ բարենորոգումները: Փաստ կը բե-  
րէին Գարանի պատռ իրանները, որոնք  
կ'արգիլեն հաւատացեալներուն զէնք կրել  
մահմետական երկրի մէջ և որոնք կ'արգիլեն  
նաև որ քրիստոնեայ մը բաղմի այն դատա-  
բանը, ուր դատը կը տեսնուի հաւա-  
տացեալի մը:

«Մենք, կ'աւելցնէին Ալբանիացիները,  
Սուլթանին կողմն ենք, բայց միեւնոյն ասեմ  
կը պատու ենք մեր կրօնը, ու չ'ենք սուր  
որ անոր սկզբունքին փլաս մը հանուի:»

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ. Կ. Պոլիս, 13  
մայիս. Ռուսական և Աւստրիական զետպա-  
նները նորէն զիմեցին Պալատն ու Բ. Դուր  
զործագրել տալու համար բարենորոգումները:  
Սակայն չը թուիր թէ քանի մ'ամիս առաջ-  
ուան վստահութիւնը մնացած ըլլայ այս  
մասին:

Իսկ Ալբանիացիներուն զկմ միշտիւ Էօմէր  
բաշան կը շարունակէ իր զործպութիւնները:  
Դեռ նոր մտած է Տիարօվա, Հազիսի շըր-  
ջակայ ցեղախումբը պատժել յետոյ, ու կը  
բալէ զէպի Իփէկ. մինչդեռ առաջուրէն Միթ-  
րովիձա զրկուած զօրագնացիքը, պէտք է ա-  
նոնց միանան այս քաղքին մէջ, ուր զեռ կը  
գտնուին ընդգլխավոր պետեր:

ՍՍԵՐԱՍ 20 մայիս. Պուլկարիոյ նոր  
գահելծը կը կարծուի թէ աւելի թուրքիոյ  
կողմը պիտի բռնէ քան թէ իր նախորդին  
պէս զործիք ըլլայ Ռուսիոյ ձեռքը:

— Պոկսանովիչի սպաննիչները փախած  
են իրենց ուղիները յուսնիւլով զիրենք հու-  
լածողներուն: Ոճիրը զործուած է մարդերով  
լիցուն հրապարակի մը մէջ:

— Մակեդոնական Տազնարպը.  
«Պրէնտէնպլաթ» վերջերս Պուլկարիոյ նա-  
խարարապետ Պ. Տանէֆի հետ տեսակցու-  
թիւն մը կը հրատարակէ, պատերազմական  
բարգութեանց կարելիութեան նկատմամբ:

Պ. Տանէֆի ամենազրական երաշխիքը  
տուած է թէ՛ Պուլկարիան բան մը պիտի  
չ'ընէ աստուկ պատահականութիւն մ'առաջ  
բերելու համար:

«Մենք, ըսած է, բազմանքներ ունինք Մակեդոնիոյ մէջ, բայց կը յարգենք թուրքիոյ վեհապետութիւնը: Մենք միայն կը փափագինք լաւագոյն պայմաններ մեր համացիզ եղբայրներուն համար, ամենէն աւելի, Պերլինի դաշնագրին գործադրութիւնը: Ասոր համար է որ մենք մակեդոնական հարցը կը նկատենք իբրև գործը տէրութեանց:»

Նախարարապետը կը կարծէ թէ՛ Մակեդոնիոյ խառնակութիւնները հետևանքն են արդի պարագաներուն, և թէ՛ Ռուսիոյ ու Աստրո-Հունգարիոյ կողմէն առաջարկուած և թուրքիոյ կողմէն ընդունուած բարենորոգումները զիտ չ'են գործադրուիր:

Սելանիկի ղեկըրը Պուլխարիոյ մէջ միաձայնութեամբ կը դատապարտուին:

Կարելի է, թէև անհասանական, թէ գործածուած տինամիթը Պուլխարիայէն գաղտագողի զրկուած ըլլայ, բայց պուլխարական կառավարութիւնը պատասխանատու չէ ատոր:

Սահմանապէսին վրայ հսկողութիւնը շատ խիստ է: Մակեդոնացի պուլխարներուն զեմ ձեռք առնուած միջոցներն ու գործուած խեղճութիւնները՝ աւելի կը նպաստեն երկրին մէջ զրգոտմ առաջ բերելու:

Մշտնապարտներու և առևտրական գործակալներու զեմի գործ զրուած խստութիւններուն լարը ճիշդ չէ:

— Տիևամիքը Սեչուանիկ. Սօֆիայէ Տեղի Մեղի հետադրուած է թէ՛ վերջերս Սելանիկի մէջ գտնուեցաւ նոր մթերանոց մը 1000 լիպրա օտինամիթի և թէ՛ ֆրանսական ու ռուսական հիւպատոսարանները խրամատուած են եղեր:

— Կ. Պոլիս, 22 մայիս. 200 է աւելի թիւով պուլխար սպաններ սահմանազուխն անցնելով 2600 ապստամբներէ բաղկացած հրոսախումբերու պոլս անցան, որոնք պիտի գործեն Մակեդոնիոյ գանազան գաւառները:

— Անգլիական նաւաստիքը, 12 մարտանու երէ բաղկացած, երեքշաբթի օրէն ի վեր մեր նաւահանգիստն է: Նաւատորմին անգլիական թղթարեք Տրայտ մարտանաւը հոս հասաւ երկու օր առաջ:

**ԱՌԻԹՆ Է**

Մեկնումի պատճառով ծախու զրուած է հոյակապ պոռաւորո Դաշնակ մը Տիար Ճ. Բարազեանի քով, Ռոզէկ փողոց, 7:

Առի՛թն է, Առի՛թն է, Առի՛թն է:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԲԱՇՃԵԱՆ**

Աթլմարիի մեծ փողոցին վերի ծայրը աջ կողմի թիւ 82 խանութը.

Փայա, Փայտածուխ, Քարածուխ, Քարիւղ, Սիւրճօ, ևն:

Մեծաբանակ ու փոքրաբանակ վաճառում.

Յանձնարարութիւնները կը կատարուին անմիջապէս, յաճախորդներուն ընակարանները յանձնուելու պայմանով:

Խանութը միշտ բաց է առաւօտեան ժամը 6 1)2 Էն մինչև երեկոյեան ժամը 8:

Ճշգրտահաւթիւն, արդար կշիւք և աժանութիւն:

ԳՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՆԻԿ

Դիմեցէք և փորձեցէք

Ազգարինի վերջին ծայրի աջ կողմը թիւ 82 խանութը:

**ԼԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ**

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լոյսն, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, զիտական, գրական, առևտրական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական գաստիարաթիւթեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս՝ առաւելց ու է վճարումի՛ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան աստիճաղը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առուելութիւններուն, անմրցելի կերպով շափաւոր է:

Հայ ծնողներու համար մասնաւոր պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատանս յայտագիրն ամեն ուզողի կը ղրկուի:

ՏԵՕՐԷՆ Մ. ՆԱԼԳԱՆՏԵԱՆ

Տարթ. ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ռուսցիչ

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գող Մժղօ. վասպօրականի կեանքից, հեղինակ Նշիկ Երկց: Ժամանակակից, այսինքն կէս դար առաջ Հայաստանի կողմերը տեղի ունեցած զէպքեր, վիպականօրէն նկարագրուած, ամբողջութեամբ յանձնարարելի է, չը նայելով դրականութեան կանոններուն գէ՛մ ինչ ինչ մեղանշումներուն, որոնք զգալիօրէն աչքի կը զարնեն յիշեալ գիրքին մէջ, որ վէպ մը չէ, թէ՛ կազմութեամբ թէ՛ ձևովը, այլ պարզապէս պատմութիւն մը:

Կը վաճառուի փխնիկի տպարանը,  
Հատը երկու ֆրանգի  
Հասոյթը յատկացուած է հայրենիքի  
որբերուն:

### Ճամբորդութեան սպասորութիւններ ի Զուիցերիա

ՆՇԱՆ ԿՈՐԿՈՑԵԱՆ

Ստացած ու կարգացած ենք այս գրքոյից, որ կը պարունակէ փետր. 22 ին Կահիրէի Լսարան-խնթերցատան մէջ արտասանուած բանախօսութիւն մը:

Զուիցերիոյ տեղադրութեան հետ պ. բանախօսը յաջողած է ճարտարօրէն պատկերացնել արեւմտեան դժբախտին կենսատու կլիման, դիւթական անսարանները, վարչական առաւելութիւնները, հն. Ամեն Հայոցով գտնուելու արժանի գրքոյի մը: Գինն է երեք զրշ. ուղ. Գլխեյ խմբագրատունը:

## ՀԱՄԲԱՐ ԴԱՎԻԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԴԵՐՁԱԿ

Արքայի ձգկիթի ղիմաց Մեծ Մկրտչոյ խանութք  
Կը գործածէ՝ սովորաբար անգլիական ու ֆրանսական տակուն ու ազնիւ կերպանները, չափաւոր գներով, գոհացնելով մինչև իսկ ամենէն նրբաճաշակ յաճախորդներն ու յարգելով իրենց ամենափոքր ղիտողութիւնները: Կը պատրաստէ, ի պահանջել հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ զբառիւ մը:  
Հարիւր զրուշի առևտուրի փոխարէն յաճախորդը կ'ստանայ հարիւր հատ վաճառականական գրոշմաթուղթ, որ հօս կը ծախուի: Դիմեցէք Մեծ Մկրտչոյ խանութք:

Ա Ջ Պ

Թէլէֆօն 33

Նամակատուի թիւ 398

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ • ԳՈՀԱՐՆԵՐ • ԱՂԱՄԱՆԴՆԵՐ • ԱԿՆՈՑՆԵՐ •

# L. KRAMER & Co

Հայրապետի Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ • ԳԱՏԻՐԷ • ԵԳԻՊՏՈՍ

## ԳՈՐԾԱՑՈՐՆ ՔՈՂԱՐԵՂԻՆԱԶ

Սղեխանդիա, Տպարան ՍԻՍՈՒԱՆ